ԱՋ ՁԵՌՆ ԵՒ ՁԱԽ ՈՏՆ

Հասարակաց և ընդհանուր կարծիք է՝ որ ինչպէս աջ ձեռքը աւելի յաջող և գործածական է յաշխատութիւնս՝ որով և աւելի ուժով, այսպէս նաև աջ ոտքը աւելի ուժով քան զձախն։ Այս կարծիքը լաւ քննելով կը տեսնենք որ անհիմն է, և նոյն իսկ կրնանք ապացուցանել՝ որ շատ անդամ՝ ձախ ոտքն աւելի ուժով է քան զաջն։ Նոյն իսկ հարևանցի կերպով նկատելով՝ երբ աջ ձեռքը ետևէ է ծանր աշխատութեան մը՝ պէտք է ըստ ինքեան ձախ ոտքը գործածել հաւասարակշռութեան համար։ այնպէս որ երբ ոտքի մը վրայ կեցած կ'աշխատաի ոք աջ ձեռքով, մի և նոյն ժամանակ ընական բերմամբ կը չանայ գործածել ձախ ոտքը. համաձայնիս, աջ ձեռքին իւրաքանչիւր շարժման, հակամիտութիւն մը կ'զգայ մարդս շարժելու ձախ ոտքը։ Ընդհանրապէս գրել սորվող տղան՝ մատերուն հետ միանգամայն կը շարժէ լեզուն և մարմնոյն զանազան մասունքը։ Նոյն իսկ կրնանք ըսել՝ թէ աջ ձեռքով գրելու ժամանակ՝ ձախ ոտքն ալ շարժումներ կ'ընէ. իսկ այս շարժմունքն լաւագոյն կերպով կը տեսնուին՝ երբոր շրջագայութեան ատեն գաւազանով խաղալիք, այն ժամանակ աջ ձեռին շարժմունքը՝ համապատասխան կ'ըլլան ձախ սրունքից շարժմանց։ Այսպէս նոր ոտք ելած քառոտանի կենդանեաց վրայ ալ կը տեսնենք՝ որ առջևի աջ ոտքը կը շարժի համապատասխան կերպով ետևի ձախ ոտքին, և փոխադարձաբար։

Ուստի հետևաբար, որովհետև մարդս աւելի աջ ձեռքը կը գործածէ քան թէ ձախը, հաւանական է թէ ձախ սրունքը աւելի գործածէ քան թէ աջը։ Եւ շատերն աւելի դիւրաւ դէպ յաջակողմն քան թէ 'ի ձախ կրնան դառնալ, և այս պատճառաւ ձիրնթացիս մէջ ալ ամենայն ինչ այնպէս կը կարգադրուի՝ որ կրկիսին մէջ ձիր աւելի դէպ 'ի աջ վազեն։ Շատ անձինք՝ որ սառի վրայ սահելով զանազան խաղեր կ'ընեն՝ աւելի ձախ ոտից քան թէ աջոյն վրայ կը կատարեն զանոնք, միով բանիւ, 'ի սկզբան դիւրագոյն է ձախ ոտքը գործածել անոնց մէջ։ Լարախաղացներու շարժմանց մէջ դժուարագոյնն է ձախ ոտքին վրայ հաւասարակշռութիւնն։ Ընդհանրապէս պարելու մէջ ալ դէպ յաջ կը դարձուի, սակաւք կը յաջողին անոր հակառակը կատարելու։ Հագուելու ատեն ալ շատերը նախ ձախ ոտքը կ'անցընեն զգուլպան, և ոմանք կը պնդեն եւ՝ որ եթէ դիպուածով նախ աջ ոտքը անցուցեր են, կը բռնադատուին հանել զայն և ըստ սովորութեան հագուիլ։

Աշխարհիս ամէն կողմը ընդհանուր կանոն մ'է՝ աջը միշտ վերադասել քաջելու ատեն։ Արդ ասոր պատճառն ինչ է։ Ցիրաւի հետաքրքրական բան մ'է, սակայն շատեր կան որ առանց դիտնալու իսկ այս

digitised by A.R.A.R.@

ընդհանուր կանոնը՝ կը պահեն զայն ճշդիւ։ Սիպլէյ այս նիւթիս հա-
մար շատ հարցումներ ըրած է ռամկին, բայց գոհացուցիչ պատաս-
խան մի ընդունած չէ. և նոյն իսկ քաղաքակիրթ մարդկանց շատե-
ր՝ չեն կրնար այս հարցմանս պատասխանել ճշդութեամբ։ Ուստի
յայտնի է՝ թէ՝ այս աջոյն վերադասութեան ծագումն՝ կանոն մի չէ,
այլ պէտք է ուրիշ պատճառ մ՝ըլլայ. և բայց ասկէ՝ եթէ կայ այսպիսի
ընդհանուր կանոն մի, հարկ է որ այդ կանոնը ընդհանուր ծագումմ
մ՝ալ ունենայ։ կ՝ըսուի թէ՝ ձախ սրունքն աւելի զօրաւոր ըլլալով՝ միշտ
հակամիտեալ ենք դէպ յաջն. և յայսմ է ծագումն ընդհանուր կա-
նոնին։ Այս նիւթիս նկատմամբ շատերուն տուած պատասխանը ա-
ւելի կը պայծառացրնեն խնդիրը. «կանոն մի չեմ գիտեր, թէպէտ և
միշտ յաջ կը դիմեմ, այս աւելի բնական կ՝երևի ինձ». և այլ ասոր
նման պատասխաններ կու տան։ Եւ յաճախ կը տեսնուի այս բանիս բը-
նական ըլլալն. ժողովուրդը միշտ դէպ յաջակողմն կ՝ընթանայ. այսպէս
փարիզու աշխարհանդիսին ատեն երկու փայտեայ կամուրջներ շի-
նուեցան, և պատճառաւ մի քաղաքական իշխանութիւնը պատուի-
րեց որ ձախ կողմէն անցնի բազմութիւնը, սակայն նա միշտ դէպ
յաջակողմն կ՝ընթանար՝ մեծ չփոթութիւն հանելով։

Ձախ սրունքն աւելի զօրաւոր ըլլալուն պատճառաւ, բնական է
մարդու՝ աջէն աւելի զայն գործածել։ Այսպէս յունգիա՝ի Գերմա-
նիա՝ի Գաղղիա և Իտալիա միշտ ձախ ոտքով կ՝ընթանան գունդք
զօրայ։ Եւ ի՝չպէս աջ ձեռքը աւելի արագութեամբ կը գործածուի,
նոյն բանը կը տեսնուի ձախ ոտի վրայ, նոյնպէս ձիու կամ արագ-
ատն մեքենայի վրայ ելնելու ատեն, ձախ ոտքը ասպանդակի վրայ
կը դրուի։ Իսկ արագատն մեքենայից ընթացից և վարժութեանց ա-
տեն՝ ընդհանրապէս դէպ՝ի ձախ կողմն դարձին պատճառն այս է
թերևս՝ որ ձախ սրունքը աւելի ուժով ըլլալով, գիւրագոյն է զմե-
քենայն դէպ՝ի ձախ դարձընել։

Ցատքելու ատեն շատերն ձախ ոտքով կը նետուին։ Լողցման
մէջ բազումք մարմնոյն աջ կողմը դէպ՝ի վար կը բռնեն հաւասա-
բակշռութիւն պահելու համար, և միևնոյն ժամանակ կը գործածեն
գլխաւոր մղիչ զօրութիւնը, որ է ձախ սրունքն։

Դարևոր է դիտել և՝ որ ըստ Պառնուսի, հենգնաբար խօսելով՝
առանց թևոց մարդ մի աւելի ձախ է քան թէ աջ, այսինքն, ամէն բանէ
առաջ ձախ ոտքը կը գործածէ։ Գրելու և նկարելու ատեն գրիչը և
վրձինը ձախ ոտից մատանց մէջ կ՝անցընեն, և եթէ հարցընես՝ թէ ինչ
է ասոր պատճառն, կը պատասխանէ՝ թէ ես ալ չեմ գիտեր, բայց
բնական բան մ՝է։ Այս բանս փորձով հաստատուած է։

Ցարվին քանի մը տարիէ՝ի վեր հետևեալ դիտողութիւնքն ըրած
է։ Նա ութ դպրոցական տղայ ժողվեց, տասներկու տարեկան, և
աչքերը կապած չիտակ քալել կրցուներուն մէյմէկ չիլին սուակ տը-

digitised by A.R.A.R.@

ւաս։ Սակայն այս մրցմանէ առաջ դեռնոյ վրայ տակաւ մի փայտի թեփ տարածեց, և տղայոց քալելէն ետքը, անոնց 'ի ձախոյ դէպ յաջ և փոխադարձ քայլերն չափեց։ Կ'ըսէ՝ քար նետելու ատեն ամէնքը աջ ձեռք կը գործածէին, և երկուքը միայն ձախի նշան մի կու տային։ Վեց ուղղաձեռն տղաք երկայն քայլեր առին 'ի ձախոյ դէպ յաջ և ձախ ոտքով ցատքեցին։ Ապա զանոնք դաշտ մը տանելով հոն գաւազան մի տնկեց քառասուն քայլի չափ հեռու, և այլերին կապելով ինքը քանի մը քայլ առաջ տարաւ զիրենք, և յետոյ ձգեց որ ինքիրենցմէ երթան դէպ 'ի գաւազանն, տեսաւ որ ուղղաձեռն տղաք դէպ յաջ խոտորեցան, իսկ միւս երկու ձախաձեռինք դէպ 'ի ձախ։— Ցտրվին կը յաւելու՝ թէ իրեն և իւր բարեկամաց վրայ ալ նոյն բանը փորձեց, և ամէնքը դէպ յաջ խոտորեցան բաց 'ի միոյն՝ որ յայտնապէս ձախ էր։

Գալով երկու սրունից չափին, կարսոնի քննութեանց համեմատ՝ զորս ըրած է եօթանասուն կմախքի վրայ, ձախը երկայնագոյն է քան զաջն։ Ըստ Սիպլէյի ձախ ոտքը երկայնագոյն և լայնագոյն է քան զաջն։

Արդ աջ ձեռաց և ձախ ոտից յաճախագոյն գործածութեան երևութէն կը հետևի՝ թէ բնութիւնն ըստ կարելւոյն կը ջանայ երկակողմանի անհոտոտներ յառաջ բերել։ Եւ եթէ նա՝ միայն աջակողմեան գործածութեան դիմէր՝ շուտով ամէնքնիս ալ միակողմանի կ'ըլլայինք։ Այսու, թէպէտ բարձրագոյն կարգի կենդանեաց զարգացման մէջ բերում մի կայ դէպ յանչափակցութիւն, սակայն արտաքին չափակցութիւնը միշտ կը պահուի՝ ձախակողմեան և աջակողմեան գործարանաց ոմանց համեմատական աճմամբն։

ՆԻԳԱՐԱԿՈՒԱՑԻ ՋՐԱՆՑՔԸ

Ամէնուն ծանօթ է որ վերջերս ամերիկացի հարուստ դրամատեարց ընկերութիւն մը կազմուած է, իր հաշուոյն համար խաղաղական Ովկիանոսը՝ Ատլանտեանին հետ միացնելու նպատակաւ, ջրանցքի մը միջոցով որ պիտի անցնի Նիգարակուայի հասարակապետութենէն և համանուն ընէն։ Այս գործն արդէն շատ ատենէ 'ի վեր գիտնական և նշանաւոր բաղմաթիւ անձինքներէ առաջարկուած էր, և այնչափ օգուտ և առաւելութիւն ունի՝ որ դժուարաւ կ'ըմբռնենք թէ ինչու համար Լէսէբս այս ջրանցքէն նախագաս համարեցաւ նոյն նպատակին համար Բանամայի պարանոցը։ Այս վերջնոյս ձախորդ ելքն արդէն ամենուն ծանօթ է։ ընդհակառակն ամերիկացի դրամատեարց սկսած գործն յաջողութեամբ կը յառաջադիմէ և քիչ ատե-

digitised by A.R.A.R.@